ՆԱԶԱՐ.– Ա՜ման, ա՜ման այ ջա՜ան…

ՈՒՍՏԻԱՆ.– (Մահակը ձեռին ներս վազելով) Է՞դ է քո թագաւորի ժողովքը, հա՞… (Մահակը խփելով գլխին) Կե՛ր, քեռ՜փակ… (Թագուհիներն ու սազանդարները փախչում են դուրս։)

ՆԱԶԱՐ.– Բէ՛, բէ՛, բէ՛, բէ՛… (Փախչում է մի կողմ։ Ուստիանը ընկնում է նրա հետեւից, բայց նկատելով ներս մտնող սենեկապետին՝ զսպում է իրան ու ետ քաշւում։ Նազարը՝ նստելով գահին, ոտները ծալապատիկ քաշում է իրան) Գեադա՛, սենեկապետ, կանչիր նազիր-վեզիրին… ես գանգատ ունեմ տէրութեան։ (Սենեկապետը գնում է։)

ՈՒՍՏԻԱՆ.– Խո՜րեմ թագաւոր գլուխդ… (Սենեկապետը վերադառնում է նազիր-վեզիրի, զօրավարի եւ պալատականների հետ։)

ՆԱԶԻՐ.– Հրամայի , Կենտրոն տիեզերաց։

ՆԱԶԱՐ.– Ես հրամայում եմ, որ… (Ուստիանը խեթ նայում է նրան, Նազարը զսպում է իրան եւ լռում) Հը՜մ… (Սակայն համբերութիւնից դուրս գալով) Բէ՛… (Վեր է թռչում. նստած) Բէ՛… (Վեր է թռչում) Ի՞նչ է թագաւոր չե՞մ, բերանս պիտի ջուր առնե՞մ…(Դրսից աղմուկի ձայն է գալիս։ Դուռը ծեծում են։) Գեադա, էս ժողովո՞ւրդ է, ի՞նչ է, ի՞նչի է կանգնել էնտեղ։ Կռիւ չի՞ գնացել։

ՆԱԶԻՐ.– Ո՛չ, տէր իմ։

ՆԱԶԱՐ.– Եա… ի՞նչ է ասում։ Գեադա, ո՞վ է իմացել թագաւորը հրամայի, ժողովուրդը կռիւ չգնա։ (Դառնում է Սաքոյին) Սաքո, գնա՛։

ՍԱՔՈ.– (Սաստիկ վախեցած) Գը, գը, գը, գը, գնա՞մ…

ՆԱԶԱՐ.– Եա՛լլա, հառամզադա։ Ինչ։ Թագաւոր ես ուզում դառնա՞ս, դե՛ առաջ ընկի։

ԲՈԼՈՐԸ.– Իշխան Սաքո՛, յառա՛ջ…

ՍԱՔՈ.– (Գնում է պատշգամբ եւ դիմում ժողովրդին) Գեադէ՛ք, թը-թը-թագաւորը հրամայմայում է։ (Սարսափած ետ է փախչում։) Ամ-մա՜ա՜ն…

ՆԱԶԱՐ.– (Պալատականներին) Եա՛, եա՛… տո գնացէք կախէք ժողովրդին։ Սենեկապետ, գնա, զօրապետ, գնա, նազիր-վեզիր, Ղոռոբուղա։

ՈՒՍՏԻԱՆ.– (Որ ներս էր մտել եւ լսում էր վերջին խօսքերը։ Բամփելով նրա գլխին) Ցխե՜մ թագաւոր գլուխդ, դու գնա, նրանց ո՞ւր ես զարկում։

ՆԱԶԱՐ.– (Վախով նայում է Ուստիանին։ Իսկ պալատականները սարսափում են Նազարից եւ սպասում, թէ նա ինչ կանի։)